



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 25 » 01 2021թ.

№ 08/ԼԱ/ - 30

**Հունվարի 18-24-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում**

Հունվարի 18-ին, 21-ի գիշերը՝ առանձին շրջաններում, 19-ին՝ ողջ հանրապետությունում, 20-ին՝ շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Ջերմուկում՝ 34,9մմ, Գորիսում՝ 31,3մմ, Որոտանի լճ.ում՝ 28մմ, Մարտունիում՝ 26մմ, Հրազդանում՝ 24մմ, Ուրցաձորում՝ 23մմ, Ֆանտանում՝ 21մմ, Մասրիկում, Սեմյոնովկայում և Կապանում՝ 19մմ, Ամբերդում, Ծաղկահովիտում, Անանուն լճ.ում, Ճամբարակում՝ 18մմ, մնացած շրջաններում՝ 2-17մմ քանակությամբ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը հունվարի 18-ին նորմայից բարձր է եղել 5-7 (Արարատյան դաշտում՝ 8-10), 19-ին՝ 1-3 (Արարատյան դաշտում՝ 2-4, Տավուշում և Լոռիում՝ նորմայից ցածր 1-2), 20-ին՝ նորմայից ցածր 2-4 (Արարատյան դաշտում՝ նորմայից բարձր 1-2), 21-ին՝ նորմայից ցածր 3-7 (Արարատյան դաշտում՝ 1-3), 22-ին՝ նորմայից ցածր 4-8 (Արարատյան դաշտում՝ 4-6, Տավուշում՝ 2-5), 23-ին՝ 6-10 (Արարատյան դաշտում՝ 5-7, Տավուշում՝ 1-3), 24-ին՝ 4-8 (Արարատյան դաշտում՝ 5-6, Լոռիում՝ 1-4) աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է հունվարի 18-ին: Արարատյան դաշտում, Սյունիքում, Տավուշում գրանցվել է +8...+11°C (Կապանում, Մեղրիում՝ +18°C): Լոռիում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի նախալեռներում՝ +3...+8°C (Արենիում՝ +13°C), Գեղարքունիքում, Շիրակում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի լեռներում՝ -1...+4°C (Աշոցքում՝ -2°C) աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է հունվարի 23-ին: Շիրակում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի լեռներում գրանցվել է -20...-25°C (Աշոցքում՝ -35°C, Ամասիայում՝ -26°C), Լոռիում, Գեղարքունիքում՝ -17...-22°C (Մասրիկում՝ -30°C, Գավառում՝ -23°C, Շորժայում՝ -16°C, Օձունում՝ -12°C), Արարատյան դաշտում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի նախալեռներում՝ -14...-18°C (Արաբկիրում՝ -12°C), Տավուշում, Սյունիքում՝ -7...-12°C (Սիսիանում՝ -27°C, Դիլիջանում՝ -14°C, Մեղրիում՝ -6°C):

Հունվարի 18-ին առանձին շրջաններում դիտվել է քամի 13-15մ/վրկ, պողոթկումների ժամանակ՝ 16-20մ/վրկ, 23-ին՝ Իջևանում՝ 9մ/վրկ, պողոթկումների ժամանակ՝ 17մ/վրկ արագությամբ:

Հունվարի 18-ին Անանուն լքբ.-ում դիտվել է գետնաբուք 10մ/վրկ, պողոթկումների ժամանակ՝ 18մ/վրկ արագությամբ:

Հունվարի 24-ին Արարատում դիտվել է մառախուղ՝ 40մ տեսանելիությամբ:

Հունվարի 24-ի դրությամբ ձյան ծածկը կազմում է Արագած բարձրլեռնային կայանում 100սմ, Ամբերդում՝ 56սմ, Ջերմուկում՝ 53սմ, Որոտանի լքբ.-ում՝ 49մ, Աշոցքում՝ 38սմ, Ամասիայում՝ 36սմ, Անանուն լքբ.-ում՝ 34սմ, Հրազդանում՝ 33սմ, Ապարանում՝ 27սմ, Ապարանի ջմբ.-ում, Ճամբարակում, Մասրիկում՝ 26սմ, Ֆանտանում, Սիսիանում և Մարտունիում՝ 24սմ, Սևանում՝ 21սմ, Սեմյոնովկայում՝ 18սմ, Ուրցաձորում՝ 17սմ, մնացած շրջաններում՝ 3-15սմ:

Հանրապետության գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում մնացել է անփոփոխ և կազմել՝ 1900.52մ (24.01.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 10 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար

Լ.Ազիզյան